Հաստատված է
Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2025 թվականի նոյեմբերի 26-ի N14 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հապավումներ 4

2. Ներածություն 5

2.1. ՇՎՏՄ-ի նպատակը 5

2.2. ՇՎՏՄ-ի խնդիրները 5

3. **Կառուցվածք** 6

4. ՇՎՏՄ-ի ընթացիկ տարվա ընթացքում ունեցած ձեռքբերումները 6

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5. ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտների ընդհանուր վիճակը 9

5.1. Տեխնիկական կանոնակարգման ոլորտ

5.1.1. Տեխնիկական կանոնակարգման ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 12

5.1.2. Տեխնիկական կանոնակարգման ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ 12

5.2. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի ոլորտ

5.2.1. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 13

5.2.2. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ 14

5.3. Չափումների միասնականության ապահովման ոլորտ

5.3.1. Չափումների միասնականության ապահովման ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 14

5.3.2. Չափումների միասնականության ապահովման ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ 15

5.4. Նյութական պահուստի ոլորտ

5.4.1. Նյութական պահուստի ոլորտում առկա խնդիրները և բացահայտված 15

ռիսկերը _____

5.4.2. Նյութական պահուստի ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ _____ **16**

5.5. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտ

5.5.1. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը _____ **16**

5.5.2. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ _____ **16**

6. Վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական խնդիրները, դրանց լուծմանն ուղղված գործողությունները _____ **17**

7. Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների իրականացման նկարագրությունը _____ **24**

8. Այլ նյութեր _____ **27**

1. **Հապավումներ**

ՀՀ -	Հայաստանի Հանրապետություն
ՇՎՏՄ –	**շուկայի վերահսկողության տեսչական մարմին**
Խորհուրդ -	**ՇՎՏՄ-ի կառավարման խորհուրդ**
Ծրագիր -	**ՇՎՏՄ-ի 2026 թվականի տարեկան գործունեության ծրագիր**
ՌԳՎ -	**ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն**
ՏԿԹՄՎ -	**տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն**
ՉՎ -	**չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն**
ՕՎ -	**օրենսդրությամբ սահմանված պահանջների վերահսկողության վարչություն**
ԻՓՎ -	**իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն**
ՆՓՎ -	**նմուշառման, լաբորատոր փորձարկումների և չափումների վարչություն**
ԻԽԲ -	**իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին**

2. Ներածություն

ՇՎՏՄ-ն գործում է՝ ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 732-Լ որոշման 1-ին կետով հաստատված ՇՎՏՄ-ի կանոնադրությամբ և, համաձայն «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի, հանդիսանում է ՀՀ կառավարությանն ենթակա մարմին:

2.1. ՇՎՏՄ-ի նպատակը

ՇՎՏՄ-ի նպատակն է՝ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող ոչ պարենային արտադրանքների համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին, ստուգաչափման ենթակա չափման միջոցների համապատասխանությունը չափագիտական կանոններին և նորմերին, տեխնիկական անվտանգության ոլորտում նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանումը, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի նյութական պահուստի օրենսդրության պահանջների պահպանումը, արտադրական կանեփի նկատմամբ վերահսկողության իրականացման համար լիցենզավորված անձանց գործունեության համապատասխանությունը լիցենզավորման պայմաններին և պահանջներին, խախտումների բացահայտումը, կանխարգելումն ու վերացումը:

2.2. ՇՎՏՄ-ի խնդիրները

ՇՎՏՄ-ի խնդիրներն են ոչ պարենային արտադրանքի անվտանգության, չափումների միասնականության ապահովման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի, նյութական պահուստի, արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պայմանների և պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

3. Կառուցվածք

ՇՎՏՄ-ի կառուցվածքում ընդգրկվում են ՇՎՏՄ-ի ղեկավարի, ղեկավարի տեղակալի, ղեկավարի օգնականի և հետևյալ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները.

1) ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն,
2) տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն,
3) չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն,
4) իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն,
5) օրենսդրությամբ սահմանված պահանջների վերահսկողության վարչություն,
6) նմուշառման, լաբորատոր փորձարկումների և չափումների վարչություն,
7) որակի ապահովման վարչություն,
8) իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին:

ՇՎՏՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանված են ՇՎՏՄ-ի ղեկավարի կողմից հաստատված կանոնադրություններով:

ՇՎՏՄ-ն տարածքային ստորաբաժանումներ՝ տարածքային կենտրոններ կամ սահմանային հսկիչ կետեր չունի:

4. ՇՎՏՄ-ի ընթացիկ տարվա ընթացքում ունեցած ձեռքբերումները

ՇՎՏՄ-ի վերահսկմանը վերապահված ոլորտներում 2025 թվականի ընթացքում արձանագրված ձեռքբերումները հետևյալն են.

Տեխնիկական կանոնակարգման ոլորտում՝

- Ճիշտ թիրախավորման արդյունքում 22%-ով աճել են առանց համապատասխանության գնահատման փաստաթղթերի ուղեկցման ոչ պարենային արտադրանքների շուկայահանման բացահայտման դեպքերը՝ 2024 թվականի ինն ամսվա ընթացքում խախտումներ են հայտնաբերվել 46% տնտեսվարող սուբյեկտի մոտ, իսկ 2025 թվականի ինն ամսվա ընթացքում՝ 68%:
- Ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի ոլորտում, ՇՎՏՄ-ն արդյունավետ կիրառելով վերահսկողական գործառույթները, արձանագրել է

փորձաքննությունների արդյունքում բացահայտված անվտանգության ցուցանիշների խախտումների աճ, իսկ հեղուկացված ածխաջրածնային գազերի ոլորտում անվտանգության ցուցանիշների խախտումներ 2024 և 2025 թվականներին չեն հայտնաբերվել: Ավտոմոբիլային բենզինի անվտանգության ցուցանիշների խախտումների տեսակարար կշիռը ընդհանուր իրականացված փորձաքննությունների մեջ 2024 թվականի ինն ամսվա ընթացքում կազմել է 2% (89 փորձանմուշից խախտումներ՝ 2-ում), իսկ 2025 թվականի ինն ամսվա ընթացքում՝ 16% (43 փորձանմուշից՝ 7-ում), դիզելային վառելիքի մասով՝ 2024 թվականի ինն ամսում կազմել է 58% (43 փորձանմուշից՝ 25-ում), իսկ 2025 թվականի ինն ամսում՝ 75% (20 փորձանմուշից՝ 15-ում), հեղուկացված ածխաջրածնային գազերի մասով՝ 2024 թվականի ինն ամսվա ընթացքում խախտումներ չեն հայտնաբերվել (վերցվել է 17 փորձանմուշ), 2025 թվականի ինն ամսվա ընթացքում նույնպես խախտումներ չեն հայտնաբերվել (վերցվել է 3 փորձանմուշ):

- Խաղալիքների ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում 7 տնտեսվարող սուբյեկտից վերցվել է թվով 7 փորձանմուշ, որից ոչ մեկում անվտանգության ցուցանիշների անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի ոլորտում՝

- ՀՀ վարչապետի հանձնարարությամբ նախատեսված թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում գործունեություն իրականացնող թվով 114 տնտեսավարող սուբյեկտից ինն ամսվա ընթացքում ստուգումներ են իրականացվել թվով 86-ի մոտ: Իրականացված ստուգումների արդյունքում բոլոր տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել են չափագիտական կանոնների և նորմերի խախտումներ՝ շահագործվել են չստուգաչափված կշեռքներ, ինչպես նաև հայտնաբերվել են <<Թանկարժեք մետաղների մասին>> ՀՀ օրենքով և այս ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների խախտման 56 դեպք: Իրականացված ստուգումների ընթացքում վերցվել է 250 նմուշ (ոսկուց պատրաստված զարդ), որից թվով 7-ի (3%) հարգադրոշմը չի համապատասխանել այդ նմուշի փաստացի հարգին՝ փորձաքննության արդյունքին:

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի ոլորտում բացահայտված խախտումներով պայմանավորված իրականացվել է թվով 2 հանդիպակաց ստուգումներ հարգորոշում և հարգադրոշմում իրականացնող տնտեսվարող սուբյեկտի մոտ, որից 2-ում հայտնաբերվել են խախտումներ:

Չափումների միասնականության ապահովման ոլորտում՝

- 9%-ով նվազել են չափագիտական կանոնների և նորմերի խախտման դեպքերը: Մասնավորապես՝ 2024 թվականի ինն ամսվա ընթացքում կիրառված չափումների միասնականության ստուգաթերթերի 70%-ով (կիրառված 466 ստուգաթերթերից խախտումներ արձանագրվել են 324-ում) արձանագրվել են խախտումներ, 2025 թվականի ինն ամսվա ընթացքում արձանագրված խախտումները կազմել են 61% (կիրառված 411 ստուգաթերթերից խախտումներ արձանագրվել են 252-ում): ՇՎՏՄ-ն 2024 թվականի 9 ամսվա ընթացքում թվով 6 տնտեսվարող սուբյեկտների մոտ լիցքավորման բաշխիչ աշտարակների/վառելիքաբաշխիչ սարքավորումների վրա փակցրել է «Մենք տուգանվել ենք թերլիցքավորման համար» թվով 8 ցուցանակ, իսկ 2025 թվականի 9 ամսվա ընթացքում՝ թվով 2 տնտեսվարող սուբյեկտների մոտ՝ թվով 2 ցուցանակ:

Նյութական պահուստի ոլորտում՝

2024 և 2025 թվականներին տնտեսվարող սուբյեկտներն ամբողջությամբ ապահովել են կուտակման ենթակա ռազմավարական պահուստի՝ նավթամթերքի ծավալները:

Լաբորատոր փորձաքննությունների իրականացման ոլորտում ՇՎՏՄ-ն նույնպես ունի ձեռքբերումներ, այն է՝ ՇՎՏՄ-ի կողմից 2024 թվականի ընթացքում խաղալիքների, ինչպես նաև հեղուկացված ածխաջրածնային գազերի փորձարկման համար լաբորատոր սարքավորումների ձեռքբերման արդյունքում փորձարարկման լաբորատորիան համալրվելով է ևս նոր 2՝ հեղուկացված ածխաջրածնային գազերի և խաղալիքների ոլորտներով (2025 թվականի սեպտեմբերի 10-ին հավատարմագրվել են): Ինչպես նաև, բենզինի ոլորտում հավատարմագրված լաբորատորիայում ավելացել է ևս մեկ անվտանգության ցուցանիշի՝ բենզոլի որոշման հնարավորություն:

ՇՎՏՄ-ի գործունեությանն առնչվող գործընթացների թվայնացման ոլորտում՝ 2025 թվականին ՇՎՏՄ-ն և Տեսչական մարմինների համակարգման գրասենյակի հետ

համատեղ մշակում է ճանապարհային քարտեզ այն հնարավորինս արդյունավետ և սեղմ ժամկետներում իրագործելու ուղղությամբ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5. ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտների ընդհանուր վիճակը

ՇՎՏՄ-ի կողմից 2025 թվականի ինն ամսվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտների մոտ փաստացի իրականացված ստուգումների և բացահայտված խախտումների քանակային պատկերը հետևյալն է՝

N	Ստուգման հիմքը	Քանակը		
		ակտ	տեղեկանք	ընդամենը
1.	ծրագրով իրականացված	353 (79.7%)	90 (20.3%)	443
2.	դիմում-բողոքի հիման վրա	14 (23.3%)	46 (76.7%)	60
3.	ՀՀ վարչապետի հանձնարարությամբ	86 (100%)	0 (0%)	86
4.	Այլ պետական մարմինների գրությունների հիման վրա	6 (75.0%)	2 (25.0%)	8
5.	Հանդիպակաց ստուգումներ	2 (100%)	0 (0%)	2
ԸՆԴԱՄԵՆԸ		461 (77.0%)	138 (23.0%)	599

ՇՎՏՄ-ի կողմից 2025 թվականի ինն ամիսների ընթացքում իրականացված ստուգումների արդյունքներով պայմանավորված ՇՎՏՄ-ի ղեկավարի կողմից արձակվել է թվով 71 կարգադրագիր:

ՇՎՏՄ-ի կողմից 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և փաստացի իրականացված ստուգումների քանակային պատկերը հետևյալն է՝

Եռամսյակներ	Նախատեսված	Իրականացված
1-ին եռամսյակ	150	143 (83%)
2-րդ եռամսյակ	180	162 (86%)

3-րդ եռամսյակ	150	138 (69%)
4-րդ եռամսյակ	120	-
ԸՆԴԱՄԵՆԸ	600	(443 ինն ամիս)

Տնտեսվարող սուբյեկտների մոտ ծրագրով նախատեսված ստուգումների քանակը փաստացի իրականացված ստուգումների քանակից քիչ է հետևյալ պատճառներով՝ 16 տնտեսվարող սուբյեկտի գործունեությունը ժամանակավոր դադարեցված է, 2-ը՝ սնանկ, 1-ը՝ հաշվառումից հանված, 9 տնտեսվարող սուբյեկտի մոտ բաշխիչ աշտարակները կապարակքնված է եղել այլ պետական մարմնի կողմից, 7-ը՝ վերահսկման ենթակա ոլորտում գործունեություն չեն իրականացնում, 2-ը՝ չի հայտնաբերվել:

Ստորև ներկայացվում է ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտների ընդհանուր վիճակը.

N	Ոլորտի անվանումը	Խախտումները ըստ ստուգաթերթի		
		կիրառ-վել է	խախտում է արձա-նագրվել	խախտման տեսակարար կշիռը (%)
1.	Չափումների միասնականության ապահովում	411	252	61.3
2.	Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	103	83	80.6
3.	Խաղալիքներ	90	74	82.2
4.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ վաճառք	85	56	65.9
5.	Ցածրավոլտ սարքավորումներ	71	54	76.1
6.	Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն	69	53	76.8
7.	Թեթև արդյունաբերություն	63	47	74.6
8.	Օծանելիքակոսմետիկական արտադրանք	60	33	55.0
9.	Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ)	50	39	78.0
10.	Փաթեթվածքի անվտանգություն	49	36	73.5
11.	Կահույքագործական արտադրանք	35	30	85.7
12.	Ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք	32	26	81.3

13.	Հեղուկացված ածխաջրածնային գազեր	30	9	30.0
14.	Քսանյութեր, յուղերին և հատուկ հեղուկներ	28	13	46.4
15.	Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ	27	23	85.2
16.	Լվացող և մաքրող միջոցներ	19	13	68.4
17.	Ծխախոտային արտադրատեսակների, պատկանելիքներ և դրանց փոխարինիչներ	9	2	22.2
18.	Ցեմենտ	9	8	88.9
19.	Ծխախոտային արտադրանք	10	9	90.0
20.	Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանք	8	8	100.0
21.	Սինթետիկ հիմքով լաքեր և ներկեր	5	5	100.0
22.	Ռադիոսարքավորումներ	3	3	100.0
23.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշմում	2	2	100.0
24.	Արտադրական կանեփ	1	1	100.0
	Ընդամենը	1269	879	69.3

ՇՎՏՄ-ի կողմից 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների քանակային պատկերը հետևյալն է՝

Եռամսյակներ	Նախատեսված
1-ին եռամսյակ	150 (25%)
2-րդ եռամսյակ	180 (30%)
3-րդ եռամսյակ	150 (25%)
4-րդ եռամսյակ	120 (20%)
ԸՆԴԱՄԵՆԸ	600

ՇՎՏՄ-ն, հաշվի առնելով 2025 թվականի ինն ամսվա ընթացքում իրականացված ստուգումների արդյունքները 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագրով թիրախավորել է հետևյալ ոլորտները՝

- չափումների միասնականության ապահովում,
- երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք
- խաղալիքներ,
- ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք,
- ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ),
- հեղուկացված ածխաջրածնային գազեր

5.1. Տեխնիկական կանոնակարգման ոլորտ

5.1.1. Տեխնիկական կանոնակարգման ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Տեխնիկական կանոնակարգման ոլորտում առկա հիմնական խնդիրն է՝ ապահովել անվտանգ ոչ պարենային արտադրանքների առկայությունը շուկայում:

Այս խնդրի ապահովման հետ կապված ՇՎՏՄ-ի կողմից բացահայտված ռիսկերն են՝

- առանց համապատասխանության գնահատման փաստաթղթերի ուղեկցման ոչ պարենային արտադրանքի շուկայահանումը,
- առանց մակնշման կամ թերի մակնշման ոչ պարենային արտադրանքի շուկայահանումը,
- տեխնիկական կանոնակարգերով սահմանված անվտանգության ցուցանիշներին չհամապատասխանող ոչ պարենային արտադրանքի շուկայահանումը:

5.1.2. Տեխնիկական կանոնակարգման ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Տեխնիկական կանոնակարգման ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն կիրառել է իր վերահսկողական, ինչպես նաև իրազեկման և խորհրդատվական գործառույթների ողջ գործիքակազմը: Մասնավորապես՝ 2025 թվականի ինն ամիսների ընթացքում իրականացված թվով 269 ստուգումների ընթացքում կիրառվել է տեխնիկական կանոնակարգման ոլորտի 711 ստուգաթերթ, որոնցից 527-ով (74%) արձանագրվել է խախտում: Արձանագրված խախտումների վերացման արդյունքում

օրենքով սահմանված կարգով տնտեսվարող սուբյեկտները դիմել և ձեռք են բերել համապատասխանության գնահատման թվով 159 փաստաթուղթ:

Տեխնիկական կանոնակարգման ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով հավատարմագրվել է նավթամթերքի լաբորատորիան, ինչպես նաև ձեռք է բերվել հեղուկացված ածխաջրածնային գազերի և խաղալիքների լաբորատոր սարքեր (խրոնոգրաֆներ): Ներկայումս աշխատանքներ են տարվում այս ոլորտների մասով ՇՎՏՄ-ի լաբորատորիան ընդլայնելու ուղղությամբ:

5.2. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի ոլորտ

5.2.1. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում առկա հիմնական խնդիրն է՝ ապահովել հարգադրոշմին համապատասխանող թանկարժեք մետաղից պատրաստված իրերի առկայությունը շուկայում:

Այս խնդրի ապահովման հետ կապված ՇՎՏՄ-ի կողմից բացահայտված ռիսկերն են՝

- ՀՀ-ում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված անձանց կողմից թանկարժեք մետաղներից պատրաստված իրի իրական հարգից ավելի բարձր հարգ դրոշմելը,
- ՀՀ-ում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառք իրականացնող անձանց կողմից թանկարժեք մետաղից պատրաստված իրին կցված պիտակի վրա նշված տվյալների (հարգ, քաշ, թանկարժեք քարի նկարագիր) անհամապատասխանությունը այդ իրի տվյալների հետ:

5.2.2. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ի նախաձեռնությամբ հավատարմագրվել է թանկարժեք մետաղների լաբորատորիան:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ նախատեսված թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում գործունեություն իրականացնող թվով 114 տնտեսավարող սուբյեկտից ինն ամսվա ընթացքում ստուգումներ են իրականացվել թվով 86-ի մոտ: Իրականացված ստուգումների արդյունքում բոլոր տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել են չափագիտական կանոնների և նորմերի խախտումներ՝ շահագործվել են չստուգաչափված կշեռքներ, ինչպես նաև հայտնաբերվել են թանկարժեք մետաղների մասին ՀՀ օրենքով և այս ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների խախտման 65 դեպք:

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի ոլորտում բացահայտված խախտումներով պայմանավորված իրականացվել է թվով 2 հանդիպակաց ստուգում հարգորոշում և հարգադրոշմում իրականացնող տնտեսվարող սուբյեկտի մոտ, որից 2-ում հայտնաբերվել են խախտումներ:

5.3. Չափումների միասնականության ապահովման ոլորտ

5.3.1. Չափումների միասնականության ապահովման ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Չափումների միասնականության ապահովման ոլորտում առկա խնդիրն է՝ պաշտպանել սպառողներին չափման միջոցների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից: Այս խնդրի ապահովման հետ կապված ՇՎՏՄ-ի կողմից բացահայտված ռիսկերն են՝

- չստուգաչափված (տեսակը չհաստատված) չափման միջոցների շահագործումը,
- չափման միջոցի միջստուգաչափման ժամկետի խախտումը,
- չափման միջոցի ցուցմունքի անհամապատասխանությունը չափագիտական կանոններով և նորմերով սահմանված պահանջներին:

5.3.2. Չափումների միասնականության ապահովման ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Չափումների միասնականության ապահովման ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն կիրառել է իր վերահսկողական, ինչպես նաև իրազեկման և խորհրդատվական գործառույթների ողջ գործիքակազմը: Մասնավորապես՝ 2025 թվականի 9 ամիսների ընթացքում իրականացված ստուգումների ընթացքում կիրառել է չափումների միասնականության ապահովման ոլորտի 411 ստուգաթերթ, որոնցից 252-ով (61.3%) է արձանագրվել խախտում: Արձանագրված խախտումների վերացման արդյունքում օրենքով սահմանված կարգով տնտեսվարող սուբյեկտները դիմել և ստուգաչափել են թվով 168 չափման միջոց:

Չափումների միասնականության ապահովման ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն ձեռք է բերել ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի չափանոթներ, բարձր ճնշման բնական գազի բալոններ և համապատասխան կշեռքներ, հեղուկացված ածխաջրածնային գազերի փորձանմուշ վերցնելու, ինչպես նաև քաշը որոշող համապատասխան սարքեր: Այս չափման միջոցների կիրառման արդյունքում նվազել են ստուգումների իրականացման ժամկետները:

5.4. Նյութական պահուստի ոլորտ

5.4.1. Նյութական պահուստի ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

ՇՎՏՄ-ին վերապահված իրավասությունների շրջանակներում նյութական պահուստի ոլորտի հիմնախնդիրն է՝ վառելիքային պաշարների մատակարարման ժամանակավոր խափանումների ժամանակ ներքին շուկայում առաջարկի և պահանջարկի միջև անհամամասնության, ինչպես նաև տնտեսության կայունությանը խոչընդոտող այլ իրավիճակների առաջացման դեպքում ՀՀ-ում պարենային անվտանգության ապահովումը: Այս խնդրի ապահովման հետ կապված ՇՎՏՄ-ի կողմից բացահայտված ռիսկերն են՝

- տնտեսվարող սուբյեկտների կողմից կուտակման ենթակա նավթամթերքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծավալներով ամբարելը:

5.4.2. Նյութական պահուստի ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Նյութական պահուստի ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն կիրառել է իր վերահսկողական գործիքակազմը: 2025 թվականին տնտեսվարող սուբյեկտներն ամբողջությամբ ապահովել են կուտակման ենթակա ռազմավարական պահուստի՝ նավթամթերքի ծավալները:

5.5. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտ

5.5.1. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Այս ոլորտի հիմնական ռիսկը՝ արտադրական կանեփ մշակաբույսում կաննաբիդիոլի (CBD) պարունակության չգերազանցումն է տետրահիդրոկաննաբինոլի (THC) պարունակությանը և նմուշառված զանգվածում տետրահիդրոկաննաբինոլի (THC) տոկոսային պարունակության գերազանցումը 0,3 տոկոսից:

5.5.2. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում 2025 թվականին նախատեսվել էր ստուգում իրականացնել այդ ժամանակ գործող երկու տնտեսվարող սուբյեկտի մոտ: Մինչդեռ, մեկ տնտեսվարող սուբյեկտի գործունեությունը չի իրականացնում, իսկ տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացված ստուգման արդյունքում հայտնաբերվել է փորձանմուշի ցուցանիշների անհամապատասխանություն: Տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացվել է 3 դիտարկում, որից մեկով նույնպես արձանագրվել է փորձանմուշի ցուցանիշների անհամապատասխանություն: Բացահայտված խախտումների արդյունքում արձակվել է թվով 2 կարգադրագիր:

Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն ձեռք է բերել լաբորատոր սարք (խրոնոգրաֆ):

Փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ է նաև ստանդարտ նմուշ, որի ձեռքբերման ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ:

6. Վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական խնդիրները, դրանց լուծմանն ուղղված գործողությունները

2023 թվականին ընդունված ՇՎՏՄ-ի գործունեությունը կարգավորող «Շուկայի վերահսկողության մասին» ՀՀ օրենքի հիման վրա 2025 թվականի մարտի 20-ին ընդունվել է «Վտանգավոր արտադրանքի կամ արտադրանքի խմբաքանակի իրացման կասեցման, հետկանչման, ոչնչացման, օգտահանման ենթակա ապրանքների ցանկը, հիմքերը, դեպքերը և կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 334-Ն որոշումը, որն ուժի մեջ է մտել պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո՝ 2025 թվականի սեպտեմբերի 22–ին:

«Վտանգավոր արտադրանքի կամ արտադրանքի խմբաքանակի իրացման կասեցման, հետկանչման, ոչնչացման, օգտահանման ենթակա ապրանքների ցանկը, հիմքերը, դեպքերը և կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 20-ի N 334-Ն որոշման ընդունումից հետո «Շուկայի վերահսկողության մասին» ՀՀ օրենքի հիման վրա ՇՎՏՄ-ի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 07–ի թիվ N 592-Լ և N 593-Լ հրամաններով հաստատվել են հետևյալ կարգադրագրերի ձևերը՝

1. Արտադրանքի կամ արտադրանքի խմբաքանակի իրացման կասեցման, արտադրանքի հետկանչի, օգտահանման կամ ոչնչացման մասին

2. Չափման միջոցների իրացումը կամ շահագործումն արգելելու մասին:

2025 թվականի մայիսի 14–ին ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ–112–Ն ՀՀ օրենքը, համաձայն որի ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների ներմուծմանը կամ իրացմանը կամ արտադրությանը ներկայացվող ընդհանուր պահանջները խախտելու համար օրենսգրքի 47.16 հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ՝

1. Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների

փոխարինիչների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրացման նպատակով արտադրությունը կամ ներմուծումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում արտադրողի և ներմուծողի նկատմամբ՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա իրացման շրջանառության մեկ տոկոսի չափով, որի վերաբերյալ տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով պետական եկամուտների կոմիտեն տրամադրում է տեխնիկական կանոնակարգման ոլորտում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնին:

2. Սույն հոդվածի 1-ին մասի խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված վարչական տույժի կրկնապատիկի չափով:

3. Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրացումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում վաճառողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից իննհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված վարչական տույժի կրկնապատիկի չափով:

5. Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացված լինելու դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված տուգանքների չափերը կազմում են իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան գործունեության իրականացման ժամանակահատվածի հասույթի նկատմամբ նույն մասերով նախատեսված տոկոսները:

6. Ծխախոտային արտադրատեսակի ծխում նիկոտինի և խեժի՝ տեխնիկական կանոնակարգերով թույլատրելի պարունակությունը գերազանցող ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը կամ ներմուծումը կամ իրացումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհիսնապատիկից ութհարյուրապատիկի չափով:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի խախտումը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված վարչական տույժի կրկնապատիկի չափով:

8. Հայաստանի Հանրապետությունում ծամախոտի մեծածախ և մանրածախ վաճառքը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկի չափով:

9. Սույն հոդվածի 8-րդ մասի խախտումը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված վարչական տույժի կրկնապատիկի չափով:

ՇՎՏՄ–ն իր գործառույթներն իրականացնելու ընթացքում բախվում է հետևյալ օրենսդրական խնդիրներին, որոնց վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ և դրանց ընդունման արդյունքում կնվազեն վարչական ակտերի դեմ բերվող բողոքները, մասնավորապես՝

- վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմել վարչական իրավախախտում կատարած անձի բացակայությամբ, քանի որ շատ հաճախ հնարավոր չէ ապահովել անձի ներկայությունը այն կազմելիս,
- վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 34 հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները ընդլայնել և սահմանել ավելի արդիական հանգամանքներ: Օրենսգիրքը ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6–ին և ընդունումից ի վեր 34 հոդվածը չի փոփոխվել,
- առաջարկվել է ՎԻՎ օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասում «Տեսակը չհաստատված, պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում չստուգաչափված չափման միջոցներ կիրառելը» բառերը փոփոխել և սահմանել ոչ թե չստուգաչափված չափման միջոցներ կիրառելու

համար, այլ տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով չապահովելու համար, քանի որ այն շահագործելու փաստը շատ դեպքերում հնարավոր չէ ապացուցել: Այսինքն, այն պարագայում երբ տնտեսվարող սուբյեկտների հիմնական գործառույթների իրականացումը իր մեջ ներառում է նաև չափման միջոցների օգտագործում (օրինակ փոստային ծառայություններ մատուցող կազմակերպություն կամ գրավատուն), ապա պետք է դրանց առկայության դեպքում լինեն ստուգաչափված: Նշվածը վերաբերում է նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 188-րդ հոդվածի 7-րդ մասին, որը սահմանում է պատասխանատվություն տեխնիկական կանոնակարգերի կամ տեխնիկական անվտանգության ոլորտում այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող հեղուկ վառելիք, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազեր վաճառելու համար և 158-րդ հոդվածի 41-րդ հոդվածին, որը սահմանում է պատասխանատվություն հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքը տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով չիրականացնելու և (կամ) չափագիտական կանոնները և նորմերը խախտելու համար, որոնց պարագայում ևս վառելիքի վաճառք իրականացնելու փաստը պարզելու հնարավորություն առանց լրացուցիչ հարցումներ իրականացնելու ՇՎՏՄ-ն գրեթե չունի:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3.1 մասի 8-րդ կետը հնարավորություն է տալիս իրականացնել ստուգումներ այն տնտեսավարող սուբյեկտների մոտ, որոնց կողմից խախտումներ կատարվելու փաստը բացահայտվել և հիմնավորվել է մեկ այլ տնտեսավարող սուբյեկտի մոտ անցկացված ստուգման ընթացքում: Այս կարգավորումը ՇՎՏՄ-ն կիրառում է հատկապես թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման, հարգադրոշմման ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մոտ այն դեպքերում, երբ մեկ այլ տնտեսավարողի մոտ (մանրածախ վաճառք իրականացնող) անցկացված ստուգման ընթացքում պարզվում է,

որ ստուգման շրջանակներում լաբորատոր փորձարկման համար վերացված թանկարժեք մետաղից պատրաստված իրի փորձանմուշը չի համապատասխանում դրա վրա զետեղված հարգորոշման ցուցանիշին, որից հետո տվյալ թանկարժեք մետաղից պատրաստված իրը հարգորոշողի մոտ իրականացվում է ստուգում:

Վերոնշյալի շրջանակներում, ներկայումս գործող «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի նմուշառման և լաբորատոր փորձաքննության կարգը հաստատելու մասին» Կառավարության 2022թ. թիվ 1969-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետով առկա է իրավական կարգավորում, որի համաձայն՝ թանկարժեք մետաղներից պատրաստված լաբորատոր փորձաքննությունն ավարտելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննության գործընթացում օգտագործված նմուշները վերադարձվում են այն տնտեսավարող սուբյեկտին (մանրածախ վաճառք իրականացնող), որից դրանք վերցվել են: Սակայն, նման մոտեցումը հանգեցնում է գործնական խնդիրների: Մասնավորապես, երբ խախտումը հայտնաբերվում է մեկ տնտեսավարողի մոտ (մանրածախ վաճառք իրականացնող), որը իրավական հետևանք է առաջացնում մյուսի (հարգորոշողի) համար, այլևս չի լինում համապատասխան նմուշները ներկայացնել հանդիպակաց (հարգորոշող) կողմին, քանի որ դրանք վերոնշյալ Կարգի համաձայն արդեն վերադարձված են լինում տնտեսավարող սուբյեկտին (մանրածախ վաճառք իրականացնողին), ինչի հետևանքով վերջինս (հարգորոշողը) զրկվում է իր պաշտպանության իրավունքից: Վերոգրյալը հաշվի առնելով՝ առաջարկվել է դիտարկել նշված ընթացակարգում փոփոխություն կատարելու հնարավորությունը, որը թույլ կտա վերցված նմուշներում անհամապատասխանության դեպքում դրանք պահպանել որոշակի ժամանակահատվածով՝ մինչև ստուգման ընթացքում ներկայացվեն մյուս տնտեսվարող սուբյեկտին (հարգորոշողին) և տվյալ ստուգման ավարտից հետո միայն վերադարձվեն տնտեսավարող սուբյեկտին (մանրածախ վաճառք իրականացնողին) կամ մինչև ստուգման ավարտը՝ տնտեսավարող սուբյեկտի համաձայնության դեպքում (եթե հարգորոշողը համաձայն է հայտնաբերված խախտման հետ, չի ցանկանում կրկնակի փորձաքննություն և այլն):

ՇՎՏՄ-ի կողմից իրականացված ստուգումներով լիազոր մարմնի պաշտոնատար անձն տալիս է կարգադրագրեր՝ սահմանելով ժամկետներ, որոնք համաձայնեցվում են տնտեսավարող սուբյեկտի հետ՝ բացահայտված խախտումները և թերությունները

վերացնելու համար: Իրականացվող ստուգմամբ խախտումը հայտնաբերվում է ստուգում իրականացնելու հրամանով սահմանված ժամկետում, ուստի հաջորդ ստուգման ժամկետը հաշվարկվում է նախորդ ստուգման ավարտի օրվանից, անկախ այն բանից տրվել է բացահայտված խախտումները և թերությունները վերացնելու համար կարգադրագիր, իրականացվել է կարգադրագրի կատարման ստուգում, թե ոչ:

Ստուգմամբ հայտնաբերված խախտումը պայմանականորեն կարող է վերացվել հայտնաբերումից մինչև ստուգման ակտի կազմումը կամ կարգադրագրով տնտեսավարող սուբյեկտի հետ համաձայնեցված ժամկետում, որի լրանալուց հետո իրականացվում է կարգադրագրի պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգում: Ստացվում է, որ ստուգմամբ հայտնաբերված խախտումը կարգադրագրի կատարման ստուգման դրական արդյունքների դեպքում վերացվում է տևական ժամանակ հետո, որն կարող է լինել 1–2 ամիս կամ ավելին և հաջորդ ստուգման ժամանակ նախորդ ստուգմամբ հայտնաբերված խախտումը վերացնելու համար կարգադրագրով տրված ժամանակահատվածը դիտվում է որպես նոր խախտում, քանի որ հաջորդ ստուգման ժամկետը հաշվարկվում է նախորդ ստուգման ավարտի օրվանից: Նման իրավիճակներում հաջորդ ստուգման արդյունքներով վերը նշված ժամանակահատվածում հայտնաբերված խախտման համար տնտեսավարող սուբյեկտի պատասխանատու անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության՝ չնայած այն բանի, որ կարգադրագրով սահմանված ժամկետը տրվել է նախորդ ստուգմամբ հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ կրկնակի պատասխանատվությունը բացառելու նպատակով առաջարկվել է նախաձեռնել օրենսդրական փոփոխություն:

2022 թվականի դեկտեմբերի 24-ին ուժի մեջ է մտել «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-536-Ն ՀՀ օրենքը, ըստ որի՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում թերլիցքավորում հայտնաբերելուց և տվյալ խախտման համար օրենքով սահմանված կարգով վարչական պատասխանատվություն կիրառելուց հետո վարչական ակտն անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում լիցքավորման բաշխիչ աշտարակների կամ վառելիքաբաշխիչ սարքավորումների վրա՝ ընթեռնելի և տեղադրված վարորդին

տեսանելի հատվածում, չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը մեկ ամիս ժամկետով փակցնում է «Մենք տուգանվել ենք թերլիցքավորման համար» ցուցանակ: Սակայն ՇՎՏՄ–ի կողմից նշված դրույթը գրեթե կիրառելի չէ, քանի որ նույնիսկ այն տնտեսվարողները, որոնք ընդունում են կատարված իրավախախտման փաստը, սակայն դատարան հայցադիմումներ ներկայացնելով խուսափում և անհարկի ձգձգում են վերոնշյալ ցուցանակը փակցնելուց՝ գտնելով, որ այն արատավորում է իրենց բարի համբավը: Նման պայմաններում վարչական պատասխանատվություն կիրառելու որոշումը բողոքարկման արդյունքում անբողոքարկելի չի դառնում և ՇՎՏՄ-ն զրկվում է «Մենք տուգանվել ենք թերլիցքավորման համար» ցուցանակը փակցնելուց: Դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո է միայն վարչական ակտը դառնում անբողոքարկելի, որը տևում է տարիներ, որից հետո իմաստազրկվում է ցուցանակի փակցնումը: Նշված ոլորտում առավել արդյունավետ գործունեություն իրականացնելու համար առաջարկվել է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում կատարել փոփոխություններ, որը հնարավորություն կտա նշված ցուցանակը փակցնել ոչ թե վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո, այլ այն տնտեսավարող սուբյեկտին հանձնելուց հետո:

Քննարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդված 41-րդ մասով նախատեսված խախտումների (թերլիցքավորման և չստուգաչափված չափման միջոցներ կիրառելու դեպքեր) տարանջատման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ նշված հոդվածով մի քանի խախտման համար նախատեսված է մեկ պատասխանատուվության միջոց, մինչդեռ անհրաժեշտ է տարանջատել խախտումներն ու դրանց համար սահմանել առանձին տուգանքներ:

Քննարկվում է նաև ավտոմոբիլային վառելիք վաճառող տնտեսվարող սուբյեկտների (ԱԳԼՃԿ, հեղուկացված ածխաջրածնային գազ, ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք) կողմից շահագործվող վառելիքաբաշխիչ աշտարակների պարտադիր ստուգաչափման պահանջի հանման հարցը, փոխարենը էական բարձրացնել թերլիցքավորման համար սահմանված տուգանքի չափը, քանի որ ՇՎՏՄ-ի գործունեությունը ցույց է տվել, որ պարբերաբար բացահայտվում են դեպքեր, երբ

ստուգաչափված վառելիքաբաշխիչ աշտարակների ստուգաչափման դրոշմները վնասված չեն, մինչդեռ արձանագրվում են թերլիցքավորման դեպքեր:

7. Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների իրականացման նկարագրությունը

ՇՎՏՄ-ի իրազեկման և հաղորդակցման աշխատանքի նպատակն է ապահովել մարմնի գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը, հասարակության և տնտեսավարող սուբյեկտների հետ արդյունավետ երկխոսությունը, ինչպես նաև նպաստել սպառողների և տնտեսվարողների իրավագիտակցության բարձրացմանը:

Վերլուծելով 2025 թվականին իրականացված իրազեկման, խորհրդատվական և զանգերի մշակման արդյունքները՝ 2026 թվականի ծրագիրը ուղղված է աշխատանքների համակարգմանը, արագ արձագանքման գործիքակազմի ներդրմանը և հանրային իրազեկման ընդլայնմանը:

Հանրային իրազեկման հիմնական գերակա ուղղությունները, խնդիրներն ու կարիքները.

- ՇՎՏՄ-ի ղեկավարի և կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման ապահովում:
- Զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) հետ համագործակցության և աշխատանքային միջավայրի ձևավորում:
- Հասարակական կազմակերպությունների, ոլորտային ասոցիացիաների և շահառու այլ խմբերի հետ համագործակցության ապահովում:
- ՇՎՏՄ-ի գործունեության ոլորտներին առնչվող ԶԼՄ-ներում հրապարակումների մշտադիտարկում և վերլուծություն:
- Տնտեսվարող սուբյեկտներին իրավական և մեթոդական խորհրդատվության տրամադրում:
- Ֆինանսական միջոցների ներգրավում՝ իրազեկման ծրագրերի, ԶԼՄ-ներով հեռարձակումների, խորհրդատվական նյութերի պատրաստման և սոցիալական հարթակներում առաջխաղացման համար:

- Միջգերատեսչական համագործակցության ընդլայնում՝ տնտեսավարող սուբյեկտների իրենց իրավունքներին ու պարտականություններին իրազեկման նպատակով:
- Քարոզարշավների և իրազեկման արշավների կազմակերպում՝ ՇՎՏՄ-ի պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների (Facebook, Instagram, Telegram, YouTube) կիրառմամբ:

ՇՎՏՄ-ի ղեկավարի և կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ հանրային իրազեկումը կիրականացվի մամուլի հաղորդագրությունների, ԶԼՄ-ների միջոցով կազմակերպվող հարցազրույցների, ամփոփիչ ասուլիսների, հրապարակվող հաշվետվությունների, տեսա-ֆոտո նյութերի և տեղեկատվական այլ նյութերի պատրաստման ու սոցիալական ցանցերում տարածման միջոցով:

ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ համագործակցությունը կշարունակվի տարբեր ֆորմատներով՝ հարցազրույցներ, մամուլի ասուլիսներ, ոլորտային քննարկումներ և աշխատանքային հանդիպումներ:

Հասարակական կազմակերպությունների, ասոցիացիաների և ոլորտային շահառու այլ խմբերի հետ համագործակցությունը կապահովվի ըստ անհրաժեշտության՝ համատեղ աշխատանքային քննարկումների և աշխատաժողովների պլանավորման և անցկացման, ինչպես նաև դրանց տեղեկատվական լուսաբանման միջոցով:

Ամենօրյա ռեժիմով կշարունակվի ՇՎՏՄ-ի գործունեությանն առնչվող մեդիա կոնտենտի հավաքագրումը և վերլուծությունը, նույնականացված խնդիրների լուծման պրակտիկ ուղիների մշակումն ու իրականացման պլանավորումը:

ՇՎՏՄ-ն տնտեսվարող սուբյեկտներին պարբերաբար խորհրդատվություն և այլ մեթոդական աջակցություն տրամադրելու, ինչպես նաև օրենսդրական և ենթաօրենսդրական փոփոխություններին ծանոթացնելու նպատակով կիրականացնի իրազեկման միջոցառումներ՝ տեղում հանդիպում-քննարկումների և մարզային այցելությունների կազմակերպման և անցկացման միջոցով: Այսպիսի հանդիպումները տնտեսվարողներին հնարավորություն են տալիս բարձրացնել իրենց հուզող հարցերն ու խնդիրները, ստանալ համակարգված խորհրդատվություն: Ի հայտ եկած խնդիրները առաջնային օղակին փոխանցելը նպաստում է արդյունավետ աշխատանքային

միջավայրի և փոխգործակցության ձևավորմանը: Հնարավորինս մեծ թվով տնտեսվարողներ իրենց գործունեության ոլորտներին առնչվող նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների մասին կիրազեկվեն նաև թվային գործիքների (պաշտոնական էլեկտրոնային հասցե) միջոցով:

Քաղաքացիների շրջանում ՇՎՏՄ-ի և վերջինիս գործունեության ճանաչելիությունը բարձրացնելու նպատակով հաղորդակցության պաշտոնական հարթակներում պարբերաբար կտեղադրվեն իրազեկող և գործունեությունը լուսաբանող հրապարակումներ: ՇՎՏՄ-ի պաշտոնական կայքի, ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի, ինչպես նաև տելեգրամյան և յութուբյան ալիքների բովանդակային և տեղեկատվական սպասարկումը կիրականացվի տեխնիկական ժամանակակից հնարավորությունների կիրառմամբ:

ՇՎՏՄ-ի պաշտոնական կայքում կհրապարակվեն՝

- նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններ,
- հաշվետվություններ և ամփոփումներ,
- Կառավարման խորհրդի որոշումներ,
- պաշտոնական և հրապարակային տվյալներ:

Կշարունակվի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ համագործակցությունը և վերջինիս ծրագրային հնարավորությունների կիրառմամբ ոչ պարենային ապրանքներ ներմուծող տնտեսվարողների համակարգային իրազեկումը: Նախորդ երկու տարիների փորձը ցույց է տվել, որ այս իրազեկումները շատ արդյունավետ են և ծառայում են ըստ նպատակի:

ԻԽԲ-ն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կիրականացնի ՇՎՏՄ-ի թեժ գծով ստացված զանգերի, բողոքների և ՇՎՏՄ-ին հասցեագրված դիմում-բողոքների ու հարցումների վիճակագրության վարումը, ամսական, կիսամյակային և տարեկան ամփոփումները, հաշվետվությունների և խորհրդատվական նյութերի պատրաստումը:

ԻԽԲ-ը ինչպես 2025 թվականին, այնպես էլ 2026-ին կշարունակի իրականացնել չափագիտության բնագավառում ՇՎՏՄ-ի կողմից իրականացված նախորդ ստուգումների ժամկետների, արդյունքների մասին տեղեկատվություն

պարունակող արագ արձագանքման QR կոդերի տրամադրումը տնտեսվարողներին (ըստ գործունեության հասցեների):

Պարբերաբար կիրականացվի իրազեկման միջոցառումների համեմատական վերլուծություն՝ նպատակ ունենալով գնահատել հանրության հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը, բացահայտել խնդիրները և մշակել դրանց լուծման ուղիներ:

8. Այլ նյութեր

Առավել ռիսկային ոլորտները և տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու, նպատակով ՇՎՏՄ-ն տեղեկատվություն է հավաքագրել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից: Մասնավորապես՝

1. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, առողջապահության, ներքին գործերի և էկոնոմիկայի նախարարություններից,
2. ՀՀ կենտրոնական բանկից,
3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեից,
4. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից,
5. <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ից,
6. Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված տվյալներից,
7. Հայաստանի Հանրապետությունում գործող բենզալցակայաններում, հեղուկացված ածխաջրածնային գազի լիցքավորման կայաններում և ԱԳԼՃԿ-ներում իրականացված իրազեկման աշխատանքների արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունից,
8. Ստացված դիմում-բողոքներից,
9. ՋԼՄ-ներից և համացանցից:

ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեի հետ իրականացված բանակցությունների արդյունքում ՇՎՏՄ-ին ընձեռնվել է հնարավորություն իրական ռեժիմով տեղեկատվություն ստանալ ՇՎՏՄ-ի կողմից վերահսկման ենթակա ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ:

Հավելված 1

Խորհրդի 2025 թվականի
նոյեմբերի 26-ի
N14 որոշման

ԺԱՄԱՆԱԿՑՈՒՅՑ

ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտներում 2026 թվականի խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակա-տարողը	Ժամկետը
	1	2	3	4	5
1.	Ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում	Ապահովել շուկայահանված տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող ոչ պարեն ային արտադրանքների համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին	ՏԿԹՄՎ	ՉՎ ՆՓՎ	տարվա ընթացքում
2.	Չափագիտական կանոնների և նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում	Պաշտպանել սպառողներին չափման միջոցների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից	ՉՎ	ՏԿԹՄՎ	տարվա ընթացքում
3.	Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության նկատմամբ ստուգումների, դիտարկումների իրականացում	Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ապահովում	ՕՎ	ՆՓՎ	տարվա ընթացքում
4.	Նյութական պահուստի օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում	Վառելիքային պաշարների մատակարարման ժամանակավոր խափանումների ժամանակ ներքին շուկայում առաջարկի և պահանջարկի միջև անհամամասնության, ինչպես նաև տնտեսության կայունությանը խոչընդոտող այլ իրավիճակների առաջացման դեպքում անվտանգության ապահովում	ՉՎ	ՏԿԹՄՎ	I կիսամյակ II կիսամյակ
5.	ՇՎՏՄ-ի վերահսկողական ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն	Առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտների և ոլորտների բացահայտում, առաջացած ռիսկերի կառավարում	ՌԳՎ	ՏԿԹՄՎ ՉՎ ՕՎ ՆՓՎ	Տարվա ընթացքում
6.	Համագործակցել ԵԱՏՄ, ԵՄ և այլ միջազգային կառույցների, ինչպես նաև այլ մասնագիտացված շահագրգիռ մարմինների հետ	Անձնակազմի կարողությունների զարգացում, աշխատանքային ունակությունների կատարելագործում	կառուց-վածքային բոլոր ստորաբա-ժանումներ	-	Տարվա ընթացքում

Հավելված 2
Խորհրդի 2025 թվականի
նոյեմբերի 26-ի
N14 որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2026 թվականի կանխարգելիչ և իրազեկման

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը
1	ՇՎՏՄ-ի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման գործիքակազմի կիրառում և աշխատանքների համակարգում	ՇՎՏՄ-ի և վերջինիս գործունեության ճանաչելիության բարձրացում հանրության շրջանում	ԻԽԲ	—	Տարվա ընթացքում
2	QR կոդերի տեղեկատվական ապահովում և տնտեսվարողներին (ըստ գործունեության հասցեների) դրանց տրամադրում	«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 25-րդ մասով սահմանված պահանջի ապահովում	ԻԽԲ	ՌԳՎ	Տարվա ընթացքում
3	Պետական եկամուտների կոմիտեի ծրագրային հնարավորությունների օգտագործմամբ ոչ պարենային ապրանքներ ներմուծող տնտեսվարողների իրազեկում	Տնտեսվարողներին իրենց գործունեության ոլորտներին առնչվող նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտավորությունների համակարգային իրազեկում	Կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներ	—	Յուրաքանչյուր եռամսյակ 1 իրազեկում
4	Քաղաքացիների ընդունելություն	Հանրության հետ հաղորդակցության հաստատում	ԻԽԲ	Կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներ	Ըստ ձևավորված կարիքի

5	Տնտեսվարող սուբյեկտների գործունեությանն առնչվող նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների, դրանցում լրացումներ կատարելու մասին հանրայնացում ՇՎՏՄ-ի պաշտոնական կայքի և ֆեյսբուկյան, ինստագրամյան էջերի և տելեգրամյան ալիքի միջոցով	Տնտեսվարողներին իրենց իրավունքների և պարտականությունների պատշաճ իրազեկում, մշտական խորհրդատվության ապահովում, որպես արդյունք՝ արդյունավետ աշխատանքային միջավայրի և փոխգործակցության ձևավորում	ԻԽԲ	ԻՓՎ	Ըստ անհրաժեշտության
6	ՇՎՏՄ-ի ղեկավար կազմի մասնակցությամբ իրազեկում-հանդիպումներ առավել խոշոր ներկրող կամ արտադրող ընկերությունների ներկայացուցիչների հետ	Տնտեսվարողներին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվության և խորհրդատվության փոխանցում, լիարժեք հաղորդակցության հաստատում	ԻԽԲ	կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներ	Ըստ անհրաժեշտության
7	ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարողների հետ մարզային իրազեկում-հանդիպումների կազմակերպում և անցկացում	Օրենսդրական և ենթաօրենսդրական փոփոխությունների, վերահսկողության նոր մեխանիզմների և տեխնիկական կանոնակարգի պահանջների վերաբերյալ տնտեսվարողների իրազեկվածության ապահովում	ԻԽԲ	կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներ	Ըստ անհրաժեշտության
8	Հանդիպումների կազմակերպում հասարակական կազմակերպությունների, ոլորտում գործող հաշվապահական ասոցիացիաների և այլ շահառու խմբերի հետ	Համագործակցության ամրապնդում, թափանցիկության և հետադարձ կապի սկզբունքների վրա հիմնված գերատեսչական գործունեություն	ԻԽԲ	—	Ըստ անհրաժեշտության
9	ՁԼՄ-երի ներկայացուցիչների հետ մշտական համագործակցություն և տեղեկատվության փոխանցում հասանելի ձևաչափերի միջոցով	ՇՎՏՄ-ի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդում, հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացում	ԻԽԲ	—	Ամբողջ տարվա ընթացքում

10	ՇՎՏՄ-ի ղեկավար կազմի մասնակցությամբ հարցազրույցների կազմակերպում և անցկացում	Հասարակության շրջանում ՇՎՏՄ-ի գործունեության և չափելի արդյունքների լուսաբանում	ԻԽԲ	—	Ամբողջ տարվա ընթացքում
11	Տնտեսվարողների իրազեկում առցանց գործիքների միջոցով	Տնտեսվարողների իրավունքների և պարտականությունների համակարգային իրազեկում	ԻԽԲ	կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներ	Ամբողջ տարվա ընթացքում
12	ՇՎՏՄ-ի գործունեությանն առնչվող մեդիա նյութերի հավաքագրում և վերլուծություն	Հանրային կարծիքի և ԶԼՄ-երի արձագանքների մոնիթորինգ, որպես արդյունք՝ ՇՎՏՄ-ի գործունեության արդյունքների բարելավում և նույնականացված խնդիրների լուծման պրակտիկ ուղիների մշակում	ԻԽԲ	—	Ամբողջ տարվա ընթացքում
13	ՇՎՏՄ-ի պաշտոնական կայքի և ֆեյսբուկյան, ինստագրամյան էջերի և տելեգրամյան ալիքի բովանդակային ու տեղեկատվական սպասարկում, վերազինում և արդիականացում	Հանրության հնարավորինս լայն շրջանակի տեղեկացվածության ապահովում, թափանցիկության և իրազեկվածության բարձրացում	ԻԽԲ	—	Ամբողջ տարվա ընթացքում
14	ՇՎՏՄ-ի թեժ գծով ստացված զանգերի և բողոքների վիճակագրության վարում, ամսական ամփոփում, հաշվետվությունների և խորհրդատվական նյութերի պատրաստում	Հանրության հետ հետադարձ կապի և ահազանգերի վերլուծության միջոցով գոյություն ունեցող խնդիրների նույնականացում և ցուցակագրում	ԻԽԲ	—	Յուրաքանչյուր նախորդ ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 5-րդ աշխաքանքային օրը
15	ՇՎՏՄ-ին հասցեագրված դիմում-բողոքների վիճակագրության վարում, ամսական ամփոփում, հաշվետվությունների և խորհրդատվական նյութերի պատրաստում	Հանրության հետ հետադարձ կապի և իրավիճակային արձագանքների վերլուծության միջոցով գոյություն ունեցող խնդիրների վեր հանում և ցուցակագրում	ԻԽԲ	—	Յուրաքանչյուր նախորդ ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 5-րդ աշխաքանքային օրը